# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դաշտադեմ համայնք, գ. Դաշտադեմ,
հեռ. 077-42-03-09

«23» դեկտեմբերի 2016թ
Ե-0077

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԸ_Ն՝ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում եմ Դաշտադեմ համայնքի ավագանու 20.12.2016թ թիվ 23-Ա , 24-Ա, 25-Ա որոշումները և համայնքի ղեկավարի 20.12.2016թ թիվ 5 կարգադրությունը:

Առդիր 6 թերթ:

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԽՌՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Դաշտադեմ համայնք, գ. Դաշտադեմ

հեռ.077-42-03-09

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«  20  » դեկտեմբերի 2016 թվականի N 23- Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2016 թվականի 4-րդ եռամսյակում Դաշտադեմ համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների նկատմամբ իրականացված վարչական հսկողության ժամանակ կազմված ակտի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունել ի գիտություն:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ակտում արձանագրված թերությունների և բացթողումների ուղղման և կանխարգելման ուղղությամբ:

3.Ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետին և ավագանուն:

| Ազգանուն, Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Աղայան Աստղիկ | | | |
| Թումասյան Մամիկոն | | | |
| Խոոյան Արմեն | | | |
| Տիրանյան Սուսան | | | |
| Քոսյան Մեխակ | | | |

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԽՈՒՌՅԱՆ

2016 թ.դեկտեմբերի 20
գ.Դաշտադեմ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դաշտադեմ համայնք, գ. Դաշտադեմ
հեռ. 077-42-03-09

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 20» դեկտեմբերի 2016 թվականի N 24-Ա

### ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-ին հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝

Դաշտադեմ համայնքի ավագանին որոշում է.

1. Ստեղծել Դաշտադեմ համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Աղայան Շիրազ- համայնքի ղեկավարի տեղակալ կամ խորհրդական կամ օգնական կամ աշխատակազմի քարտուղար, խորհրդի նախագահ,
2. Կարապետյան Թերմինե- աշխատակազմի քարտուղար կամ աշխատակազմի համայնքային ծառայող, խորհրդի քարտուղար
3. Քոսյան Մեխակ- ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
4. Տիրանյան Սուսան_ ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
5. Զախարյան Ինգա _ համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
6. Աղայան Վահան- համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
7. Թումասյան Լիդա- համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
8. Խոռյան Արմեն- համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
9. Մեջլումյան Լիանա_ համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
10. Մեջլումյան Արմեն_ համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2014թ. նոյեմբերի 24-ի «Դաշտադեմ համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին » N 24-Ա որոշումը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԱՂԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ | | | |
| ԹՈՒՄԱՍՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ | | | |
| ԽՌՈՅԱՆ ԱՐՄԵՆ | | | |
| ՏԻՐԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆ | | | |
| ՔՈՍՅԱՆ ՄԵԽԱԿ | | | |

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԽՌՈՅԱՆ

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դաշտադեմ համայնք, հասցե գ.Դաշտադեմ,
Հեռախոս՝ 077-42-03-09
Էլ.Փոստ՝ dashtadem.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 20 » դեկտեմբերի 2016 թվականի N 25-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Դաշտադեմ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 26-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Դաշտադեմ համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԱՂԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ | [signature] | | |
| ԹՈՒՄԱՍՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ | [signature] | | |
| ԽՌՈՅԱՆ ԱՐՄԵՆ | [signature] | | |
| ՏԻՐԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆ | [signature] | | |
| ՔՈՍՅԱՆ ՄԵԽԱԿ | [signature] | | |

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature, stamp] Մ.ԽՌՈՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Դաշտադեմ համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 20-ի N 25 –Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Սուքիասյան Հերմինե Գևորգի - 12500( տասներկու հազար հինգ հարյուր) դրամ
( Անուն, ազգանուն,հայրանուն)

2) Առաքելյան Քրիստինե Ապետնակի - 12500 (տասներկու հազար հինգ հարյուր ) դրամ,

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 25000 ( քսանհինգ հազար) դրամ:

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Թ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դաշտադեմ համայնք. գ. Դաշտադեմ,
հեռ. 077-42-03-09

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԹԻՎ 5

<<20>> <<դեկտեմբերի>> 2016 թ.

## ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով »Տեղական ինքնակառավարման մասին« Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով՝

կարգադրում եմ.

1. Կազմել Դաշտադեմ համայնքի անասնագլխաքանակի հաշվառման հանձնաժողով հետևյալ կազմով՝
   1.Շիրազ Աղայան –հանձնաժաղովի նախագահ
   2.Թերմինե Կարապետյան– հանձնաժողովի անդամ
   3. Մեխակ Քոսյան – հանձնաժողովի անդամ
   4.Կարապետ Ծառուկյան-հանձնաժողովի անդամ
2. Հանձնաժողովին 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 18-ը անցկացնել համայնքի անասնագլխաքանակի հաշվառում և արդյունքները ներկայացնել Լոռու մարզպետարան և Տաշիրի վիճակագրական բաժին:

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԽՈՍՈՅԱՆ